ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 Նոյեմբերի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

169
(2835)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԹԵԺ ԿՌԻՎԸ՝ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոնի քննչական բաժին է հրավիրվել Երեւանի ավագանու կին անդամներից մեկը: Տեղեկացանք, որ Երեւանի քաղաքապետարանում կայացած ավագանու սկանդալային նիստում միջադեպի գործով հարցաքննության է հրավիրվել Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանը: Ավելին՝ մեզ հայտնի դարձավ, որ Սոնա Աղեկյանն այսօր կրկին հրավիրված է Քննչական կոմիտե՝ հարցաքննության: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ քննիչները Աղեկյանին հարցեր են ուղղել, թե ինչից է սկսվել, ով է իր մասին ինչ ասել, ու ինչու է նա ջուր լցրել ավագանու անդամ Անի Խաչատրյանի վրա: Շատ հարցեր դեռեւս կան ավագանու անդամ Սոնա Աղեկյանին տալու, ինչի համար նրան այսօր կրկին կհարցաքննեն: Իսկ ի՞նչ էր արել Սոնա Աղեկյանը քաղաքապետարանում միջադեպի ժամանակ: Ավագանու անդամ Անի Խաչատրյանը ամբիոնից հնչեցրեց հայտարարություններ, որոնք դահլիճում կրքերը թեժացրին: Ու երբ Անի Խաչատրյանը լքեց ամբիոնը եւ վերադառնում էր նստել իր տեղը, ավագանու անդամ Սոնա Աղեկյանը ջրով լի բաժակը լցրեց նրա վրա, ինչից հետո սկսվեց ողջ կռիվը: Հետաքրքիր է՝ արդյոք կոմիտեն այս միջադեպով մինչեւ վերջ կգնա, ու պատասխանատվության ենթարկվողներ կլինեն, թե Հակակոռուպցիոն կոմիտեի օրինակով Ազգային ժողովում պատգամավորների ծեծկռտուքի դեպքի նման այն կկարճի: Հիշեցնենք, որ ոստիկանությունից հաղորդում է ստացվել այն մասին, որ 2023 թվականի նոյեմբերի 11-ին՝ Երեւանի ավագանու հերթական նիստի ժամանակ՝ ավագանու մի քանի անդամների միջեւ առաջացած տարաձայնության ընթացքում, փոխադարձ հարվածներ են հասցվել, որի ընթացքում, հասարակության նկատմամբ դրսեւորելով անհարգալից վերաբերմունք, հնչել են հայհոյանքներ՝ այդկերպ խախտելով քաղաքապետարանի բնականոն աշխատանքը: Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելը) եւ 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի (մի խումբ անձանց կողմից հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը) հատկանիշներով: Կատարվում է նախաքննություն, հանգամանքները պարզվում են:

ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մարինա Ղազարյանը 2009-2021 թվականներին եղել է Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի պատմության, հասարակագիտության եւ տնտեսագիտության ուսուցիչ: Ղազարյանը 2016 թվականից «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է, իսկ պատգամավորական մանդատը ստացել է 2021 թվականին: Պատգամավորը հայտարարագրել է 2016 թվականին նվիրատվություն ստացած մեկ բնակարան բազմաբնակարան շենքում՝ Սյունիքի մարզի Կապան համայնքում: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 4 մլն 464 հազար դրամ, որը տարեսկզբի համեմատ՝ աճել է 5,5 անգամ: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 2 մլն 600 հազար դրամ, որը տարեսկզբի համեմատ՝ գրեթե կրկնապատկվել է: Նրա՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 8 մլն 871 հազար դրամ, որից 8 մլն 492 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովից: Պատգամավոր Ղազարյանը ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից կենսաթոշակ է ստացել տարեկան 379 հազար դրամ: Ազգային ժողովում ակտիվությամբ աչքի չընկնող Պողոսյանը հանդիսանում է 6 դպրոցի եւ 1 հատուկ կրթահամալիրի («Կապանի N5 հիմնական դպրոց», «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր», «Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց», «Սյունիքի միջնակարգ դպրոց», «Արծվանիկի միջնակարգ դպրոց», «Գեղանուշի միջնակարգ դպրոց», «Ճակատենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների) կառավարման խորհրդի անդամ: Հավելենք նաեւ, որ Ղազարյանը այն իշխանականներից է, որն իշխանությունների որոշումներին կողմ քվեարկելու համար է խորհրդարան եկել, իլու-ինազանդ սեղմում է անհրաժեշտ կոճակները, առանց սեփական տեսակետի, եւ օգտվում «անվճար տուրիստական փաթեթներից»՝ գնում է գործուղումների Հայաստանում կամ դեպի արտերկիր:

Փողոցներ փակելով, ռադիոտուն ներխուժելով եւ անհնազանդության ակցիաներով իշխանության եկած թավշյահեղափոխականների իշխանությունը, թերեւս, ամենաանհանդուրժողն է փողոցային ակցիաների նկատմամբ: Սրա մասին է փաստում մինչ այս ընդդիմադիր տարբեր քաղաքական ուժերի նախաձեռնած ակցիաների առաջնորդների եւ դրա մասնակիցների նկատմամբ Նիկոլ Փաշինյանի իշխանության դրսեւորած վերաբերմունքը: Երբ ընդդիմադիր դաշտում որեւէ նոր հակաիշխանական շարժում է ձեւավորվում, իշխանության ներկայացուցիչները ջանք չեն խնայում դրա մասնակիցներին պիտակավորելու եւ վարկաբեկելու համար: Նիկոլ Փաշինյանն անհանդուրժող է նաեւ իր երբեմնի գաղափարակիցների նկատմամբ: Հասարակական-քաղաքական գործիչ Սուրեն Սահակյանը, որը հեղափոխության ակտիվ ջատագովներից էր, 44-օրյա պատերազմից հետո տարբեր ֆորմատներով ակցիաներ է իրականացնում, շարժումներ է ձեւավորում եւ պահանջում Նիկոլ Փաշինյանի հրաժարականը: Այս օրերին Սուրեն Սահակյանի եւ նրա թիմակիցների ձեւավորած «Զանգ» շարժումն է քայլերթեր եւ անհնազանդության ակցիաներ իրականացնում, վրան տեղադրում. ինչպես նրանց հայտարարություններից է պարզ դառնում, ոստիկանությունն անհանդուրժող վերաբերմունք է ցուցաբերում ակցիայի մասնակիցների նկատմամբ: «Ժողովուրդ» օրաթերթը Սուրեն Սահակյանից հետաքրքրվել է՝ ինչով է պայմանավորված Նիկոլ Փաշինյանի եւ նրա իշխանության անհանդուրժող վերաբերմունքն իրենց ակցիաների նկատմամբ, արդյոք փողոցային պայքարի օրերին ինքն արժեքավոր խորհուրդներ է տվել՝ ինչպես աշխատել հանրության հետ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՀՀ գլխավոր դատախազության պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Գարեգին Իսախանյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերեւույթ խախտման հիմքով հարուցվել է վարույթ: Ավելին՝ մեզ հայտնի դարձավ, որ այդ որոշումը ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին: 2023 թվականի հոկտեմբերի 26-ին գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի կողմից հանձնաժողովին է հասցեագրվել գրություն ՀՀ գլխավոր դատախազության պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Գարեգին Իսախանյանի կողմից «Դատախազության մասին» օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները պահպանված կամ չպահպանված լինելու վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով: Արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ՀՀ գլխավոր դատախազության պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Գարեգին Իսախանյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերեւույթ խախտման հիմքով, հարուցել է վարույթ: Բանն այն է, որ կան տվյալներ՝ դատախազ Իսախանյանը ընկերություններից մեկում բաժնեմաս է ունեցել եւ այն հայտարարագրում չի ներկայացրել, ինչը, ըստ էության, դատախազի պաշտոնի հետ անհամատեղելի է եւ պատժելի:

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ ՉԷ

Հանրային քաղաքական գործիչ Սուրեն Սահակյանն իր թիմակիցների հետ ձեւավորել է «ՁԱՆԳ» շարժումը, որն իշխանության հրաժարականի պահանջով բողոքի ակցիաներ է իրականացնում քաղաքում:

«Ժողովուրդ» օրաթերթը շարժման ակնկալիքների եւ ապագա ծրագրերի մասին խոսել է Սուրեն Սահակյանի հետ:

-Պարոն Սահակյան, Դուք եւ Ձեր թիմակիցները նոր շարժում եք ձեւավորել, եւ արդեն քանի օր՝ իշխանության հրաժարականի պահանջով ակցիաներ եք իրականացնում եւ հանրությանը հրավիրում հանրահավաքների եւ քայլերթերի: Կխնդրեմ մի փոքր մանրամասնել՝ինչպես առաջացավ գաղափարը շարժում ձեւավորելու, ինչ սպասումներ ունեք:

-Որպես այդպիսին, շարժման սկիզբը ես կարող եմ համարել ՄԱԿ-ին ուղղված Ադրբեջանի նամակը, որտեղ Ադրբեջանի հայեցակարգն էր ներկայացվում միջազգային հանրությանը, եւ պնդում կար, որ դա վիճելի տարածքներ են, այսպես կոչված, Հայաստանի տարածքից Ադրբեջանի քաղաքացիներին տեղահանել են եւ այլն: Շատ հետաքրքիր բաներ են առաջարկում, միեւնույն ժամանակ՝ շատ վտանգավոր Հայաստանի համար, թե այդ վերաբնակեցումը ինչպես պետք է իրականացվի:

Պնդում են, որ հայերը ցեղասպան ժողովուրդ են, եւ խաղաղապահ զորքեր պետք է տեղակայվեն Հայաստանում մինչեւ ադրբեջանցիների վերադարձը: Այդ խաղաղապահ ուժերը պետք է լինեն Ադրբեջանի վստահությունը վայելող երկրների ներկայացուցիչներ, պետք է մնան այնքան, որ վերաբնակեցվող ադրբեջանցիները ինքնապաշտպանական ռազմական ուժեր ունենան, ադրբեջաներենը պետք է լինի ուսուցանվող լեզու եւ այլն: Մի խոսքով, սա հայկական պետություն չէր լինելու, եւ ավելին՝ ադրբեջանական դառնալու նախադրյալներ էին ստեղծվում: Մայիսից արդեն Հայաստանի կառավարությունը բանակցություններ էր վարում դրա շուրջ: Եվ հենց այդ ժամանակից էլ սկսած՝ ես սկսեցի խոսել մարդկանց հետ, ու հասկացել եմ, որ ինձ պես շատերն են մտահոգված այդ հայեցակարգով՝ Հայաստանի ապագայի վերաբերյալ: Օգոստոսի 16-ից մենք հանրային քննարկումներ ենք տարել, եւ շուրջ մեկ ամիս տեւողությամբ շտաբային աշխատանքներց հետո ձեւավորվել է «ՁԱՆԳ» շարժումը:

Նիկոլ Փաշինյանի հրաժարականը շարժման առաջնային նպատակը չէ: Մեր նպատակն է ստեղծել պետություն, որը ունակ է դիմակայել մարտահրավերների, եւ այսօրվա իշխանությունը անմիջական խոչընդոտ է դրան:

-Ովքե՞ր են շարժման անդամներ հանդիսանում:

-50 օր ով մասնակցել է քննարկումներին, խնդիրը դարձրել է իրենը, նրանք են հենց ձեւավորել այդ կորիզը, որը շտաբային աշխատանքներ է իրականացնում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆՀԵՏԱՑԵԼ Է

Ո՞ՒՐ Է ԽՈՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Նոեմբերի 27-ին քաղաքապետարանում տեղի ունեցավ հերթական գործակարգավարական նիստը:

Պարբերաբար տեղի ունեցող այս նիստերին արդեն երկրորդ անգամ չի մասնակցում Երեւանի քաղաքապետարանի շինարարության եւ բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Խորեն Գրիգորյանը:

«Ժողովուրդ» օրաթերթին Երեւանի քաղաքապետարանից տեղեկացրին, որ Խորեն Գրիգորյանը նոյեմբերի 20-ից մինչեւ դեկտեմբերի 1-ը գտնվում է արձակուրդում, այդ իսկ պատճառով ներկա չի եղել:

Հիշեցնենք, որ մամուլում հայտնվել էին նյութեր, ըստ որոնց՝ Երեւանի քաղաքապետարանի շինարարության եւ բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Խորեն Գրիգորյանը, սեփական դիմումի համաձայն, ազատվել է աշխատանքից:

Վերջինս, սակայն, հաջորդ օրը ֆեյսբուքյան իր էջում գրեց, թե ազատման դիմում չի գրել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նրա՝ աշխատանքից ազատման շուրջ լուրջ խմորումներ են գնացել քաղաքապետարանում:

Բանն այն է, որ Տիգրան Ավինյանը փոխքաղաքապետերի նշանակումից հետո բաժանումներ է արել, թե նրանցից ով որ ոլորտը պետք է համակարգի: Ըստ այդմ՝ փոխքաղաքապետ Լեւոն Հովհաննիսյանը պետք է քաղշին ոլորտը վերահսկեր: Եւ, ահա, Լեւոն Հովհաննիսյանն իր մոտ է կանչել Խորեն Գրիգորյանին ու ասել, որ այսուհետ պետք է հաշվետու լինի իրեն, պահանջել է նաեւ այսուհետ իրեն ցույց տալ շինթույլտվությունների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը:

Մշտապես ինքնագործունեությամբ զբաղվող Խորեն Գրիգորյանին դուր չի եկել, որ իրեն պետք է այսուհետ վերահսկի Հովհաննիսյանը, եւ նա «սպառնացել է», թե ազատման դիմում կգրի: Այդ խոսակցության ընթացքում Հովհաննիսյանի աշխատասենյակում թեժ կռիվ է սկսվել:

Ավելի ուշ Տիգրան Ավինյանն իր մոտ է կանչել Լեւոն Հովհաննիսյանին եւ Խորեն Գրիգորյանին ու ասել է՝ պետք է մի կողմ դնել տարաձայնությունները ու նորմալ աշխատել միասին:

Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, այդ օրը՝ մինչեւ ուշ ժամ, քաղաքապետարանում լարված իրավիճակ է եղել:

Երկար խոսակցություններից հետո Խորեն Գրիգորյանը հետ է կանգնել իր «սկզբունքային» որոշումից եւ «մեկնել» արձակուրդ, իսկ թե կվերադառնա նա արձակուրդից, ցույց կտա ժամանակը:

ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

ՈՐՔԱՆ ԵՆ ԲԵՆԶԻՆ ԾԱԽՍԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է այն շարքը, որում պարբերաբար անդրադառնում է պետական պաշտոնյաներին, երկրի առաջին դեմքերին սպասարկող մեքենաների բենզինի ծախսին եւ դրա հավելյալ պահանջված քանակին ու հիմնավորմանը: Արդեն անդրադարձել ենք ՀՀ վարչապետին, ԱԺ հանձնաժողովների նախագահներին, ԱԺ փոխնախագահներին սպասարկող մեքենաներին հավելյալ տրամադրվող բենզինի քանակությանը: «Ժողովուրդ» օրաթերթը այս անգամ հարցում է ուղարկել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի աշխատակազմ՝ պարզելու, թե վերջին մեկ տարում որքան բենզին է ծախսել Խաչատուրյանին սպասարկող ավտոմեքենան: Հարցրել էինք՝ քանի մեքենա է սպասարկում նրան, եւ, ըստ մեքենաների, խնդրել էինք տրամադրել տեղեկատվություն, թե որքան դիզվառելիք է ծախսվել նրան սպասարկող բոլոր ավտոմեքենաների համար: Նաեւ խնդրել էինք հայտնել՝որքան բենզին է հավելյալ տրամադրվել վերը նշված բոլոր սպասարկող մեքենաների համար եւ ինչ անհրաժեշտությամբ: Նախագահի աշխատակազմից, շատ արագ արձագանքելով մեր գրությանը, ժամեր անց տեղեկացրին, որ հանրապետության նախագահին սպասարկող մեքենան, ինչպես նաեւ ուղեկցող մեքենաները հանրապետության նախագահի աշխատակազմի հաշվեկշռում չեն, եւ, բնականաբար, վերջինիս կողմից ավտոմեքենաների համար անհրաժեշտ բենզին չի հատկացվում: Ավելի ուշ նախագահականից «Ժողովուրդ» օրաթերթին պարզաբանեցին, որ բոլոր այն մեքենաները, որոնք սպասարկում են նախագահին, գտնվում են ՊՊԾ-ի վերահսկողության տակ, այդ իսկ պատճառով էլ տվյալներ փոխանցել չեն կարողացել: ՊՊԾ-ից, մեր բանավոր հարցերին ի պատասխան, հայտնեցին, որ բանավոր ոչինչ ասել չեն կարող: Ավելի ուշ «Ժողովուրդ» օրաթերթը նույն հարցումն ուղարկեց ՊՊԾ պետի պարտականությունները կատարող Արթուր Գասպարյանին: Օրեր անց պարոն Գասպարյանի ստորագրությամբ ուղարկվեց փաստաթուղթ, որում, մասնավորապես, ասվում է. ««Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածում ամրագրված է, որ պետական պահպանությունն իրականացվում է գործունեության բացահայտ եւ գաղտնի մեթոդների եւ միջոցների կիրառման համակցության սկզբունքներով, իսկ նույն օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ պետական պահպանության ծառայությունում պետական եւ ծառայողական գաղտնիքի պաշտպանությունն իրականացվում է՝ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Հայցվող տեղեկությունը, «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ եւ 12-րդ հոդվածների համաձայն, ընդգրկված է գաղտնագրման ենթակա տեղեկությունների հաստատված ցանկում, որի համաձայն՝ հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման կազմակերպման ձեւերի եւ մեթոդների, ինչպես նաեւ նրանց կեցության, սննդի եւ տրանսպորտային սպասարկման, այդ թվում՝ պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների նպատակով միջոցառումների սպասարկման համար օրենսդրությամբ սահմանված կարգով եւ դեպքերում պետության կողմից անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռք բերման գործընթացի վերաբերյալ տեղեկությունները հույժ գաղտնի են, ուստի եւ, նույն օրենքի համաձայն, դասվում են պետական գաղտնիքի շարքին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԳԵԼԱՓԱԿՎԵԼ Է

ՍԴ աշխատակազմի նախկին ղեկավար Էդգար Ղազարյանն երեկ ֆեյսբուքյան իր էջում հայտարարել էր, որ «Հայաստան» դաշինքն արգելափակել է իր մասնակցությունը «ՀայաՔվե» հայտարարության նախագծի վերաբերյալ խորհրդարանական լսումներին. «2023 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում ԱԺ «Հայաստան» խմբակցության նախաձեռնությամբ տեղի են ունեցել խորհրդարանական լսումներ՝ «ՀայաՔվե» քաղաքացիական նախաձեռնությամբ ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին հարցի վերաբերյալ:

Հանդիսանալով «ՀայաՔվե»-ի սկզբնական նախաձեռնող խմբի 66 անդամներից մեկը, ինչպես նաեւ ակտիվորեն ընդգրկված լինելով նախաձեռնության քարոզչական աշխատանքներում՝ իմ անունը շատերի հետ միասին ներկայացվել է ԱԺ «Հայաստան» խմբակցություն լսումներին հրավիրելու նպատակով: Ավելին՝ ես նախապես հաստատել եմ ոչ միայն իմ հնարավոր մասնակցությունը, այլեւ լսումների ժամանակ ելույթով հանդես գալու պատրաստակամությունը:

Լսումներից մեկ օր առաջ ես տեղեկացվել եմ, որ «Հայաստան» խմբակցությունից ջնջել են իմ անունը հրավիրվածների ցանկից՝ հնարավորություն չտալով մասնակցել լսումներին: Փորձելով հետաքրքրվել պատճառների մասին՝ ինձ պարզաբանել են, որ իմ անունը դուրս է մնացել հրավիրվածների ցանկից մասնակիցների մեծ թվի եւ դահլիճի սահմանափակումների պատճառով: Լսումների ընթացքից պարզ եղավ, որ այդ «բացատրություն»-ը որեւէ հիմք չունի, քանի որ լսումների ժամանակ դահլիճում առկա էին մի քանի տասնյակ ազատ տեղեր: Սա հիմք է տալիս պարզել, որ «Հայաստան» դաշինքի այդ որոշումը, որն արժանացել է «ՀայաՔվե» նախաձեռնության համակարգող մարմնի լուռ համաձայնությանը, ունի այլ պատճառներ: Ես ստիպված եմ կատարել իմ սեփական ենթադրությունները, որոնք առնվազն ինձ համար հստակեցնում են գործող «ընդդիմության» իրական կարգավիճակը»:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը, անդրադառնալով Էդգար Ղազարյանի գրառմանը, պարզաբանեց. «Այդ լսումներին հրավիրյալների ցանկը սարսափելի մեծ է եղել՝ 200-ից ավել մարդ, ստիպված էինք ցանկը սահմանափակել, որպեսզի Ազգային ժողովի աշխատակազմը կարողանար նաեւ մուտքի թույլտվություն տալ: Ցավոք սրտի, մի քանի հրավիրյալների անուններ դուրս մնացին ցանկից, դրանց մեջ է եղել նաեւ Էդգար Ղազարյանը, ինչը, կարծում եմ, մեծ ողբերգություն չէ:

Նախկինում էլ մեր կազմակերպած լսումներին նա ներկա է եղել, դրանից հետո գրառում չի արել եւ շնորհակալություն հայտնել: Հավելեմ, որ լսումներից առաջ Էդգար Ղազարյանը հեռախոսազրույցով տեղեկացվել է դրա մասին»:

ԱՆՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆ ԿԱՆԱՅՔ

Երեւանի նոր ձեւավորված ավագանին թերեւս կարճ ժամանակ է, ինչ սկսել է իր աշխատանքը, բայց գրեթե բոլոր նիստերն ուղեկցվում են սկանդալներով, վիճաբանություններով եւ թեժ լեզվակռիվներով:

Ընդ որում՝ առավել ակտիվ են ավագանու կին անդամները, որոնք հաճախ են հայտնվում վիճաբանությունների կենտրոնում: Այս ավագանին ունի 25 կին անդամ: «Ժողովուրդ» օրաթերթը կներկայացնի ավագանու կին անդամներին, որոնք առավել ակտիվ են եւ հաճախ են հայտնվում վիճաբանությունների կիզակետում:

Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Նուարդ Վարդանյանն ավագանու ամենաակտիվ անդամներից է, որն իր հայտարարություններով հաճախ է հայտնվում սկանդալի կենտրոնում: Նա ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Ծովինար Վարդանյանի քույրն է: Նուարդ Վարդանյանը աչքի էր ընկել հատկապես այն բանից հետո, երբ 2019թ.-ին ֆեյսբուքյան իր էջում սպառնացել էր ընդդիմադիրների «ականջ ծամել»: «Սա ձեզ համար 90-ականները չի, որ մարդ սպանեք շքամուտքի մոտ ու կոծկեք ձեր կերած բողկերը: Ես՝ որպես 90-ականների երեխա, որն էդ սարսափի մեջ է մեծացել, թույլ չեմ տալու, որ զարմուհիս ու մնացած մեր երեխաները դա ապրեն: Անհրաժեշտության դեպքում հատ-հատ բոլորիդ ականջները կծամեմ», - գրել էր նա, ինչից հետո հայտնվեց հանրության ուշադրության կենտրոնում:

Երեւանի ավագանու՝ հանրությանը հայտնի կին անդամներից է նաեւ երիտասարդ դերասանուհի Տաթեւ Հովակիմյանը: Նա ՔՊ-ի ցուցակով մասնակցեց ավագանու վերջին ընտրություններին եւ մուտք գործեց քաղաքականություն, ինչից հետո նրա հասցեին սուր քննադատություններ սկսեցին հնչել թե՛ հանրության, թե՛ անգամ իր կոլեգաների կողմից:

Դերասանուհի, ավագանու նորընտիր անդամ Տաթեւ Հովակիմյանը հերթական անգամ քննադատությունների կիզակետում հայտնվել էր օրերս՝ այն բանից հետո, երբ հայտարարել էր. «Իմ գիտակից կյանքում չեմ հանդիպել Արարատ Միրզոյանի պես ԱԳ նախարարի»: ԱԺ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի օգնականը՝ Նատալի Սինորյանը նույնպես ՔՊ խմբակցության կազմում գործուղվել է ավագանի: Վերջինս այս ընթացքում սկանդալների կենտրոնում չի հայտնվել, փոխարենն աչքի է ընկել լրագրողների նկատմամբ իր դժկամ եւ խուսափողական վերաբերմունքով: Նա ԱԺ-ում էլ մշտապես փորձում էր խոչընդոտել լրագրողների աշխատանքը, եւ, ըստ մամուլում շրջանառվող տեղեկությունների, Կոնջորյանի փոխարեն նա էր «կառավարում» ՔՊ-ն:

Ավագանու հնաբնակներից Իզաբելլա Աբգարյանը, որը ավագանի էր մուտք գործել 2018թ.-ին իշխող «Իմ քայլը» կուսակցության ցուցակով, պատերազմից հետո՝ 2020թ.-ին, խմբակցությունից դուրս գալու դիմում էր ներկայացրել, իսկ արդեն 2023թ.-ի ավագանու ընտրություններին նա մասնակցեց ընդդիմադիր թեւից հանդես եկող նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի թիմով: Այժմ նա «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղարն է:

«Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի նախկին փոխտնօրեն Քրիստինա Վարդանյանը նույնպես Հայկ Մարությանի թիմում է: ՀՀ առաջին ՄԻՊ Լարիսա Ալավերդյանի դուստրը՝ Նարե Արամյանը եւս ավագանու անդամ է. նա 2023թ. սեպտեմբերի 17-ին կայացած Երեւանի ավագանու հերթական ընտրություններում «Ազգային առաջընթաց» կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երեւանի ավագանու անդամ: ՔՊ-ի հետ կոալիցիա կազմած «Հանրապետություն» կուսակցության ղեկավար Անի Խաչատրյանը վերջերս ավագանիում տեղի ունեցած վիճաբանության կիզակետում էր հայտնվել: Նրա սուր ելույթից հետո «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանի հետ թեժ վիճաբանություն սկսվեց, որն ուղեկցվեց միմյանց վրա ջուր շփելով, մազ քաշելով:

Ավագանու կին անդամների սկսած թեժ վեճը շարունակվել էր նաեւ քաղաքապետարանի միջանցքներում՝ արդեն ավագանու անդամների եւ վարչական շրջանների ղեկավարների մասնակցությամբ: Սոնա Աղեկյանը նույնպես ավագանու ամենասկանդալային դեմքերից է: Նա հանրությանը հայտնի դարձավ այն բանից հետո, երբ 2019թ.-ին՝ նախկին քաղաքապետ Տարոն Մարգարյանի պաշտոնավարման ժամանակ, կոյուղաջրեր էր տարել քաղաքապետարան: Քաղաքապետարանում տեղի ունեցած վեճի կենտրոնում էր նաեւ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Նարինե Հայրապետյանը, որը հայհոյանքներ էր հնչեցրել վեճի ժամանակ: Վերջինս ԵԿՄ, «ՀԱԲ», «Ֆիդայիներ», «Արցախյան պատերազմի վետերաններ», «Ազատամարտ», «Արծիվ 30», «Առաջին գունդ», «Հայ-ռուսական բարեկամության դաշինք» եւ այլ կազմակերպությունների անդամ է: Նա շատ սուր գրառումներով է հաճախ հանդես գալիս նաեւ ֆեյսբուքյան իր էջում: Ավագանու ամենաէքսցենտրիկ կին անդամներից է նաեւ «Մայր Հայաստան» խմբակցությունից Զարուհի Փոստանջյանը:

Նա թեեւ ավագանու նիստերին չի մասնակցում, բայց հաճախ է սկանդալային հայտարարություններով հանդես գալիս եւ խոստանում է «ՔՊ-ի կյանքը դժոխքի վերածել»:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԲՈՒՆՏ ԵՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Երեւան քաղաքի 13 եւ 40 համարի ավտոբուսի վարորդները բունտ են հայտարարում եւ ստորագրահավաք են սկսում: Բանն այն է, որ վարորդները հայտնվել են փակուղու առաջ եւ չգիտեն՝ ինչպես քաղաքացիներին բացատրել, թե որն է իրենց՝ ժամերով ուշանալու բուն պատճառը:

Ըստ վարորդների՝ Նար-Դոս եւ Խորենացի փողոցներում մեքենայի անիվներ վաճառող խանութների առեւտրականները ճանապարհահատվածը վերածել են շուկայի. «Օրվա որ ժամը լինի, մենք չենք կարողանում այդ հատվածում երթեւեկությունը պատշաճ իրականացնել եւ սպասարկել կանգառներում ժամերով մեզ սպասող քաղաքացիներին: Մի քանի անգամ ահազանգել ենք ոստիկաններին, եւ նշված փողոց են եկել ոստիկանության մեքենաները, պարեկները ստիպել են առեւտրականներին ճանապարհից հեռացնել իրենց ապրանքները, որպեսզի Նար-Դոս եւ Խորենացի փողոցներում երթեւեկությունը վերականգնվի:

Բայց հենց ոստիկանությունը գնում է, առեւտրականները նորից հանում են անիվները եւ այլ ապրանքներ: Ես չեմ հասկանում՝ դժվար է՝ այդ հատվածում ոստիկանությունն ամեն օր վերահսկողություն սահմանի եւ առեւտրականներին թույլ չտա ապրանքները հանել եւ դնել ճանապարհին: Ճիշտ հասկացե՛ք՝ եթե այնտեղ ամեն օր ոստիկանության աշխատակիցներ լինեն, վստահեցնում եմ ձեզ՝ երթեւկությունը կկարգավորվի, իսկ մենք ժամանակին կհասնենք կանգառներ, եւ քաղաքացիներն էլ ստիպված չեն լինի ժամերով սպասել 13 եւ 40 համարներին»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշում են վարորդները:

ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐ՝ ՄԵՏՐՈՅՈՒՄ

Միասնական տոմսային համակարգի ծրագրի շրջանակում Երեւանի մետրոպոլիտենի 10 կայարաններում տեղադրվել են մոտ 20 վճարային տերմինալներ (վալիդատորներ). այս մասին նոյեմբերի 27-ին՝ Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական հերթական խորհրդակցության ժամանակ, ասաց Երեւանի մետրոպոլիտենի գլխավոր տնօրենի պաշտոնակատար Բաբկեն Սեդրակյանը:

Նա նաեւ տեղեկացրեց, որ առաջիկա 10 օրվա ընթացքում մետրոպոլիտենը կհամալրվի մեկ շարժակազմով՝ երեք վագոններով:

«Երկու շարժակազմ էլ՝ 3-ական վագոններով, առաջիկա ամիսներին գիծ դուրս կգա: Արդյունքում 3 ամսվա ընթացքում կունենանք երեք նոր շարժակազմ»,- ասաց Սեդրակյանը:

Հավելենք, որ անցած շաբաթ մետրոպոլիտենում ուղեւորափոխադրումների թիվը կազմել է 565 հազար 746 ուղեւոր, գիծ է դուրս բերվել 2836 շարժակազմ:

Հիշեցնենք, որ ներկայումս քաղաքային իշխանությունները աշխատանքներ են տանում միասնական վճարային համակարգի ներդրման ուղղությամբ: Այն թույլ կտա քաղաքացիներին Երեւանի հասարակական տրանսպորտի ուղեվարձը վճարել 4 եղանակով:

ՊԱՐՔՎԵՑ

ՀԱՓՇՏԱԿԵԼ ԵՆ ՄՈՏ 55000 ԴՈԼԱՐ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության Երեւանի քաղաքային վարչությունում ստացված օպերատիվ տվյալների իրացման արդյունքում ներկայացված առերեւույթ հանցանքի մասին հաղորդման եւ դրան կից ներկայացված համաղտասախան փաստը հաստատող նյութերի հիման վրա քննչական գլխավոր վարչությունում նախաձեռնված քրեական վարույթով իրականացված համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների ու վարութային գործողությունների արդյունքում բացահայտվել են նախնական համաձայնությամբ, խմբի կազմում առանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելու, դրան օժանդակելու, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմնի կազմակերպության եւ առեւտրային կազմակերպության կողմից տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող եւ իրավունք վերապահող փաստաթղթեր կեղծելու առերեւույթ դեպքեր:

«Կատարված ապացուցողական եւ վարութային այլ գործողությունների արդյունքում պարզվել է, որ նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի մատակարարման պետական գնումների մրցույթներում հաղթող ճանաչված եւ սննդի մատակարարմամբ զբաղվող «Հայկազունք» եւ «Ֆոտոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների փաստացի սեփականատեր Յ.Ա-ն, նշված ընկերություններում վարորդ-առաքչի գործառույթներ փաստացի իրականացնող Պ.Մ-ի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում մեկ միասնական դիտավորությամբ խաբեության եղանակով կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ, առանձապես խոշոր չափերի գումարներ հափշտակելու դիտավորությամբ, միմյանց գործողությունները փոխլրացնելով, տեղական ինքնակառավարման մարմնի կազմակերպության եւ առեւտրային կազմակերպության կողմից տրվող, իրավաբանական նշանակության փաստ հաստատող եւ հատուցման իրավունք վերապահող, տարբեր տեսակի սննդի պահանջարկի եւ մատակարարված լինելու վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող ուռճացված տվյալներով կազմված կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ, «Հայկազունք» ՍՊ ընկերության աշխատակիցներ Կ.Մ-ի, Ն.Հ-ի, Ն.Ն-ի, Ս.Ս-ի, Ռ.Մ-ի, ինչպես նաեւ մսամթերքի տեսակավորման եւ բաշխման գործընթացում ներգրավված Գ.Ս-ի, Ա.Ա-ի, Երեւանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող տարբեր մանկապարտեզների պատասխանատու անձանց եւ այլ անձանց՝ միջոցներ տրամադրելու եւ խոչընդոտները վերացնելու եղանակներով դրսեւորված օժանդակությամբ 2023 թվականի փետրվարից նոյեմբեր ամիսների ընթացքում փոխանցման եղանակով ստացել եւ խաբեության եղանակով հափշտակել են փաստացի չմատակարարված ապրանքների խմբաքանակների դիմաց վճարված՝ առանձնապես խոշոր չափերով գումարները:

Քրեական վարույթի շրջանակներում ձեռք բերված բավարար փաստական տվյալների հիման վրա՝ հանցավոր խմբի 9 անդամների նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով, հարուցվել են հանրային քրեական հետապնդումներ, ներկայացվել են մեղադրանքներ: Հանցավոր խմբի անդամների մի մասը խոստովանական ցուցմունքներ է տվել հափշտակության կատարման մեխանիզմի, հանցավոր խմբի անդամների դերակատարության, հանցավոր ճանապարհով ստացված եկամտի բաշխման, առանձնապես խոշոր չափերով հափշտակության կատարման հանգամանքների շուրջ կայացված պայմանավորվածությունների, դրանց իրագործման եղանակների եւ այլնի մասին: Ցուցմունքին կից ներկայացվել են նաեւ հափշտակության կատարման հանգամանքը հիմնավորող, ինչպես նաեւ հանցավոր եկամտի բաշխման չափի վերաբերյալ փաստական տվյալներ պարունակող գրառումներով փաստաթղթեր: Հանցավոր խմբի անդամներից հինգի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

Միեւնույն ժամանակ խուզարկություններ են կատարվել հանցավոր խմբի անդամների բնակության հասցեներում, դրանց կից շինություններում, աշխատավայրերում, ավտոմեքենայում, ընդհանուր շուրջ չորս տասնյակ հասցեներում, որոնց ընթացքում հայտնաբերվել են առանձնապես խոշոր չափերով հափշտակություն կատարելու վերաբերյալ գրառումներ պարունակող նոթատետրեր, փաստաթղթեր, շուրջ 55.000 ԱՄՆ դոլարին համարժեք 22 մլն ՀՀ դրամ գումար, ոսկյա զարդեր, ինչպես նաեւ բջջային հեռախոսներ, համակարգիչներ:

Հարցաքննվել են նաեւ Երեւան քաղաքի տարբեր մանկապարտեզների շուրջ երկու տասնյակ աշխատակիցներ, որոնց մի մասը տվել է խոստովանական ցուցմունքներ՝ տեղի ունեցած առանձնապես խոշոր չափերով հափշտակության հանգամանքների, հիշյալ հանցանքներին իրենց առնչության եւ քրեական վարույթով ապացուցողական նշանակություն ունեցող մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ:

Նախաքննությունը շարունակվում է, իրականացվում են վարութային գործողություններ եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ դեպքի ամբողջական հանգամանքները, այդ թվում՝ մեծ ծավալի հասնող հափշտակության ամբողջական չափը եւ հանցավոր խմբի կազմում ներգրավված անձանց ողջ շրջանակը պարզելու, նրանց նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցներ կիրառելու, ինչպես նաեւ ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցումն ապահովելու ուղղությամբ»,- ասվում է հղորդագրության մեջ:

ՈՒՇԱԳՐԱՎ

ՌՈՒՄԲ՝ ԴՊՐՈՑՈՒՄ

Երեկ «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ հասան, որ Կամոյի միջնակարգ դպրոցում ահազանգ է ստացվել, որ ռումբ կա տեղադրված: Դեպքի վայր է շտապել ԱԱԾ-ն, եւ դադարեցրել են դպրոցում դասապրոցեսը: Կատարվեցին որոնողական աշխատանքներ՝հասկանալու համար՝ արդյոք դպրոցում ռումբ կա տեղադրված, թե ոչ: Փաստ է մեկ բան, որ դպրոցում դասերն ընդհատվել են, եւ երեխաներին ուղարկել են տուն: Դեպքով զբաղվում է Ազգային անվտանգության ծառայությունը:

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ 48-ամյա տղամարդն Արդարադատության նախարարության ենթակայության տակ գործող հարկադիր կատարման ծառայության շենքի դիմաց բենզինը լցրել է իր վրա՝ փորձելով ինքնահրկիզվել: Արդարադատության նախարարության ենթակայության տակ գտնվող հարկադիր կատարման ծառայության շենքի մոտ սկսվել է իրարանցում: Հարկադիր կատարման ծառայողները, վտանգելով իրենց կյանքը, կանխել են քաղաքացու ինքնահրկիզման գործողությունները: Իսկ ի՞նչն է դրդել 48-ամյա տղամարդուն գնալ ծառայության շենքի մոտ եւ նման քայլի դիմել: Մեր լրագրողական հետաքննության արդյունքում պարզեցինք, որ ինքնասպանության փորձ կատարած 48-ամյա տղամարդու նախկին կինը վարկային պարտավորություններ ունի, ինչի հետեւանքով Դատական ակտերի հարկադիր կատարում ապահովող ծառայությունը քաղաքացու բնակարանը դրել է կալանքի տակ, ինչից դրդված՝ նա փորձել է վերջ տալ կյանքին: Իրավապահները դեպքով քննություն են իրականացնում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ

«ՕՐԵՆՔՈՎ ԳՈՂԵՐՆ» ՈՒ ՕՐԵՆՔԸ

Ոստիկանությունը շարունակում է հետեւողական եւ անզիջում պայքարը քրեական ենթամշակույթի դեմ: Օրերս տրամաբանական ավարտին հասավ հերթական միջոցառումը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նոյեմբերի 17-ին Քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում ստացվել են օպերատիվ տեղեկություններ, որ Երեւանի Դավիթ Բեկի փողոցում տեղի է ունեցել վիճաբանություն: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ այդ օրը՝ ժամը 16.20-ին, «Տոյոտա» մակնիշի մեքենայի վարորդ, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող, այսպես կոչված՝ «օրենքով գող» Վիտալի Թբիլիսսկի մականվամբ հայտնի Վ. Ա.-ն եւ նրան ուղեկցող անձինք վիճաբանել են նույնպես «օրենքով գողի» կարգավիճակ ունեցող՝ Արսեն Երեւանսկի մականվամբ հայտնի Ա. Մ.-ի եւ «Մերսեդես» մակնիշի մեքենայի վարորդի հետ: Այդ ընթացքում կողմերը բացահայտ անհարգալից վերաբերմունք են դրսեւորել հասարակության նկատմամբ, կոպիտ կերպով խախտել են հասարակական կարգը, միմյանց նկատմամբ հնչեցրել հայհոյանքներ, հասցրել հարվածներ:

Նույն օրը Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ խուլիգանության հատկանիշներով:

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական լայնածավալ միջոցառումների ավարտը նեյոմբերի 22-ին էր: Ու թեեւ ստացվել էին տեղեկություններ, որ Վիտալի Թբիլիսսկին ու նրան ուղեկցողները զինված են, պրոֆեսիոնալ աշխատանքի շնորհիվ ապահովվեց միջոցառման անվտանգությունը:

Ժամը 13:10-ին Երեւան-Սեւան ավտոճանապարհին՝Սեւան քաղաքի մոտ, կանգնեցվեց վերոհիշյալ «Տոյոտան»: Խուլիգանություն կատարելու կասկածանքով ձերբակալվեցին եւ ոստիկանության Նոր Նորքի բաժին տեղափոխվեցին «օրենքով գողն» ու նրան ուղեկցող երեք անձինք:

Անձնական խուզարկությամբ Վիտալի Թբիլիսսկու մոտ հայտնաբերվեց զիպ փականով փաթեթ՝ բյուրեղանման զանգվածով, հոգեմետ երկու դեղահաբ, իսկ մեքենայի միջից հայտնաբերվեց երկու ատրճանակ:

Բոլորն էլ ներկայացվել են վարույթ իրականացնող մարմին եւ ձերբակալվել:

«Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ գրել էր, որ Երեւանում ձերբակալել են վրաց «օրենքով գողի»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 24-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 128 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐ ՉԿԱՆ

ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի համաձայն՝ դեկտեմբերի 6-ից պետական վերահսկողության ընթացքում ոչ սպանդանոցային մորթի արդյունքում ստացված կենդանական ծագման հումք եւ մթերք հայտնաբերելու դեպքում կասեցվելու է ամբողջ խմբաքանակի իրացումը, միաժամանակ կայացվելու է խմբաքանակի առգրավման եւ ոչնչացման որոշում: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ հարցնելով, թե մարզի համայնքներում քանի սպանդանոց է գործում: Մարզպետի պատասխանում նշված է. «Մարզում գործում է 3 սպանդանոց՝ Նոյեմբերյան (ք. Նոյեմբերյան), Բերդ (ք. Բերդ), Իջեւան (Գետահովիտ) համայնքներում: Դիլիջան համայնքում սպանդանոց չկա, ֆերմերներն օգտվում են Իջեւանի սպանդանոցի ծառայություններից»:

Ջրոսաշրջային քաղաք, բազում հյուրանոցներ, հյուրատներ ու ռեստորաններ ունեցող Դիլիջան քաղաքում եւ Դիլիջան համայնքի 6 գյուղերում սպանդանոց չկա: Մարզպետի այն պնդումը, թե դիլիջանցի ֆերմերներն օգտվում են Իջեւանի սպանդանոցի ծառայություններից, իրականությանը չի համապատասխանում:

Անհավատալի է, որ երբ Դիլիջան քաղաքում մի ոչխար, այծ, խոզ կամ կով են ցանկանում մորթել, այդ անասունը բարձում են բեռնատարին, քշում 34 կիլոմետր, հասնում Իջեւանի սպանդանոց, անասունն այնտեղ մորթում եւ վերադառնում են Դիլիջան:

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՁԵՎՈՎ ՄԵՐԺԵԼ Է

Նոյեմբերի 23-ին կայացել է Բերդ համայնքի ավագանու նիստ, որի օրակարգում հետեւյալ հարցն էր՝ տալ թույլտվություն՝ ՀՀ Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի վարչական սահմաններում գտնվող Տավուշ - Խնձորուտ հանքային դաշտի տարածքում՝ որպես ընդերքի տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով 3 տարի ժամկետով երկրաբանական ուսումնասիրություն կատարելու վերաբերյալ: Նիստի մասնակից ավագանու բոլոր 15 անդամները դեմ են քվեարկել այդ թույլտվության տրամադրմանը: Ավելի վաղ՝ հոկտեմբերի 26-ին՝ Բերդ քաղաքի մշակույթի տանը կայացած հանրային լսումների ընթացում, Բերդ խոշոր համայնքի բնակիչները դեմ էին արտահայտվել «Վալլեքս գրուպ»-ի կազմի մեջ մտնող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից Տավուշ - Խնձորուտ հանքային դաշտի տարածքում՝ որպես ընդերքի տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲՅՈՒՋԵ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔՆ ՈՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հայաստանի պետական պարտքը 2023 թվականի 9 ամիսների արդյունքում կազմել է 4 տրլն 454 մլրդ դրամ. «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստին՝ 2023 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանքի քննարկմանը, այս մասին ասաց ֆինանսների փոխնախարար Վահան Սիրունյանը:

«Դրամային եւ դոլարային արտահայտությամբ ՀՀ պետական պարտքը 2023թ. 9 ամիսների ընթացքում աճել է 6.4 տոկոսով: Այն աճել է համամասնորեն, քանի որ փոխարժեքը, ըստ էության, նախորդ տարվա տարեվերջի համեմատ՝ մեծ տատանում չի ունեցել: Կենտրոնական բանկի պարտքը նվազել է, իսկ կառավարության պարտքն աճել է մոտ 7 տոկոսով: Պետական պարտքը կազմել է 4 տրլն 454 մլրդ դրամ: Նախորդ տարվա տարեվերջի 4 տրլն 186.7 մլրդ դրամի դիմաց՝ կառավարության պարտքը կազմել է 4 տրլն 244 մլրդ դրամ, արտաքին պարտքը՝ 2 տրլն 354 մլրդ դրամ, ներքին պարտքը՝ 1 տրլն 890 մլրդ դրամ»,-ասաց Սիրունյանը:

Դոլարային արտահայտությամբ պետական պարտքը 9 ամսում կազմել է 11 մլրդ 322 մլն դոլար, կառավարության պարտքը՝ 10 մլրդ 790 մլն դոլար, Կենտրոնական բանկի պարտքը՝ 531 մլն դոլար:

Փոխնախարարի վստահեցմամբ՝ ընդհանուր առմամբ, կառավարության պարտքի գծով սահմանված բոլոր ուղենիշերը պահպանվել են, իսկ պարտքի միջին տոկոսադրույքը նախորդ տարեվերջի նկատմամբ աճել է 0.7 տոկոսային կետով:

Ըստ էության, պարտքի կառավարման տեսանկյունից Հայաստանը գտնվում է ռիսկի սահմանված ուղենիշների շրջանակներում:

«Կառավարության պարտքի կառուցվածքը բարելավվել է, ժամանակահատվածի վերջին դրությամբ աստիճանաբար ավելացել է դրամային պարտքի մասնաբաժինը, ներքին պարտքի եւ դրամային պարտատոմսերի մասնաբաժինն ենք ավելացնում աստիճանաբար: Ֆիքսված տոկոսադրույքով պարտքը գերազանցել է ռազմավարությամբ սահմանված նվազագույն 80 տոկոսի ցուցանիշը, այս պահին կազմում է 84 տոկոս»,-ասաց փոխնախարարը:

Նշենք նաեւ, որ Հայաստանում պետական բյուջեի եկամուտներն այս տարվա 9 ամիսների արդյունքում կազմել են 1 տրլն 708 մլրդ դրամ՝ 2022-ի նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 13.8 տոկոսով:

Փոխնախարարն ընդգծեց, որ 2023թ. 9 ամիսներին պետական բյուջեի հարկային եկամուտները շարունակել են աճել բարձր տեմպով՝ պայմանավորված հիմնականում բարձր տնտեսական աճի պայմաններում հարկային բազայի ընդլայնմամբ, ինչպես նաեւ հարկային վարչարարության ջանքերով:

Հավելենք, որ հավելուրդը կազմել է 74.6 մլրդ դրամ՝ պլանավորված 248.4 մլրդ դրամ պակասուրդի դիմաց:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԼԱՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿ՝ ԼԱՐՍՈՒՄ

Հայ-ռուսական հարաբերությունների լարումից եւ ՀԱՊԿ գագաթնաժողովներին Հայաստանի չմասնակցելու պատճառով ռուսական կողմը լարվել է նաեւ հայ տնտեսվարողների դեմ:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ հայ տնտեսվարողներին Լարսի անցակետից հետ են ուղարկել Հայաստան՝ ասելով. «Գնացե՛ք եւ պատճառը ձեր կառավարությունից հարցրե՛ք»: Տնտեսվարողները դեպի Ռուսաստան արտահանում էին բանջարեղեն, սննդամթերք, ծաղիկներ, նաեւ ձկնեղեն: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նրանք նշում են, որ Լարսի անցակետում գտնվող «Ֆիտո» սանիտարական կետում սննդամթերքների լաբորատոր հետազոտություններից հետո նրանց թղթերը հետ են վերադարձրել եւ հետ ուղարկել Հայաստան:

«Ժողովուրդ» օրաթերթին տնտեսվարողները հայտնեցին, որ իրենք այդ ստուգումներն ամեն անգամ անցել են, սակայն այս անգամ նրանց ակնհայտ ատելությամբ են վերաբերվել:

Հավելենք նաեւ, որ սա հետեւանք է Հայաստանի կառավարության ոչ աչալուրջ քայլերի:

Նշենք, որ ՀԱՊԿ գագաթնաժողովներին չմասնակցելուց հետո Պեսկովը հույս

է հայտնել, որ Հայաստանը կվերականգնի ՀԱՊԿ-ին լիարժեք մասնակցությունը:

Տեղեկություններն առաջիկայում կթարմացվեն:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

ՀՀ պետբյուջեի ծախսերի մասի կատարողականը 2023թ. կազմել է 84,6 տոկոս. այս մասին Ազգային ժողովում Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի խորհրդարանական մշտական հանձնաժողովի նիստին՝ 2023թ. ինն ամիսների պետական բյուջեի կատարողականի մասին հաշվետվության քննարկման ժամանակ՝ նոյեմբերի 27-ին, ասել է ֆինանսների փոխնախարար Վահան Սիրունյանը:

2022թ. այդ ցուցանիշը 86,6 տոկոս էր: Կապիտալ ծախսերի գծով կատարողականը կազմել է 57,4 տոկոս: Անցած տարի այդ ցուցանիշը կանգ է առել 63,2 տոկոսի մակարդակի վրա:

«Ծախսերի մեծ մասը բաժին է ընկել աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը: Խոսքը մոտավորապես 507 մլրդ դրամի մասին է: Պաշտպանության նախարարության ծախսերը կազմել են 301,2 մլրդ դրամ: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության ծախսերը կազմել են 192,6 մլրդ դրամ»,- նշել է Սիրունյանը:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 28 ճՏՊ. 3 մարդ զոհվել է, 35-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- ք. Երեւան, Նոր-Նորք, Ն. Մառի փողոց, 5 շենք, 39 հասցեում գտնվող 59,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 24100000 ՀՀ դրամ:
- Վայոց ձորի մարզ, համայնք Վայք, Վայք ք., Ջերմուկի խճուղի, 14 շենք, 38 հասցեում գտնվող 75,6 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13040000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 14.12.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 15.01.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

Team Telecom

ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԿԱՊ՝ «ԼՈՖԹ» ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ

Կարեւորելով մարզերի զարգացումը եւ սոցիալական դաստախանատվության շրջանակներում իրականացվող ծրագրերը՝ Team Telecom Armenia-ն սկսում է համագործակցությունը «Լոֆթ»-ի հետ՝ նպաստելու մարզերում երիտասարդների համար նախատեսված կրթական, մշակութային, ժամանցային նախագծերի ակտիվացմանը եւ տարածմանը:

Համագործակցության շրջանակներում Team Telecom Armenia-ն Իջեւանի եւ Մեղրիի «Լոֆթ» երիտասարդական կենտրոններին տրամադրում է անվճար գերարագ ինտերնետ՝ ստեղծելով ավելի բարենպաստ պայմաններ երիտասարդների ներգրավման եւ հաղորդակցության զարգացման հարցում: Սա թույլ կտա ընդլայնել կենտրոնների նախագծերի եւ ծրագրերի շրջանակը, որոնք կազմակերպվում են առցանց եղանակով:

«Մարզերի զարգացումը եւ ուժեղացումը, որոնք մեզ համար առաջնահերթություն են, նաեւ կապված են այդ համայնքներում ապրող երիտասարդների հետ: Համագործակցելով «Լոֆթ»-ի հետ՝ մենք աջակցում ենք հենց այդ երիտասարդներին՝ նրանց տալով որակյալ ժամանցի, ծանոթությունների հնարավորություն եւ ժամանակակից կրթական ռեսուրսներին անսպառ հասանելիություն»,- նշում է Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

«Լոֆթ» կենտրոնների գլխավոր տնօրեն Արեւիկ Համբարձումյանը, կարեւորելով Team Telecom Armenia-ի հետ համագործակցությունը, նշում է. «Նմանատիպ խոշոր ընկերությունների հետ գործընկերային հարաբերությունները շատ էական ու ոգեւորիչ են: Team Telecom Armenia-ի այս աջակցությունը թույլ է տալու էլ ավելի կրճատել մարզ-մայրաքաղաք հեռավորությունը եւ բառիս բուն իմաստով, եւ փոխաբերական: Գերարագ ինտերնետ հասանելիությունը եւ մարզաբնակ երիտասարդի հաղորդակցության միջոցների բարելավումը էական նշանակություն ունեն մեր կենտրոնների համար: Team-ի կողմից իրականացված այս ներդրումը, համոզված եմ, սկիզբն է գործընկերային այն հարաբերությունների, որոնք հետագայում լայն իմաստով նպաստելու են կենտրոնների զարգացմանն ու առաջընթացին»:

Նախաձեռնության շնորհիվ՝ մարզաբնակ երիտասարդները հնարավորություն կունենան նաեւ իրենց համայնքի «Լոֆթ» կենտրոններում հետեւելու միջազգային, համապետական եւ այլ իրադարձությունների հեռարձակմանը՝ այդկերպ մաս դառնալով մշակութային, կրթական, սպորտային եւ այլ իրադարձությունների:

Team Telecom Armenia-ի մասին

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Ընկերությունը առաջին տելեկոմն է, որ իրականացնում է IPO Հայաստանում՝ դառնալով էլ ավելի բաց ու հանրային:

Հանդիսանալով Հայաստանում հեռահաղորդակցության առաջին համակարգի ժառանգորդը՝ Team-ը ժամանակակից տեխնոլոգիաների հետ է համադրում առաջին կապի օպերատորի հարուստ փորձը. 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը, որը կապահովի որակյալ ինտերնետով Հայաստանի բոլոր բնակիչներին:

«Լոֆթ» ինքնազարգացման ու ժամանցի կենտրոնների մասին

2014-ին Երեւանում բացվեց «Լոֆթ»-ը՝ յուրահատուկ ձեւաչափ ունեցող հանրային, սոցիալական բազմաֆունկցիոնալ նախագիծ, որը խոստանում էր դառնալ 3-րդ տեղ՝ տնից, աշխատավայրից եւ/կամ ուսումնական հաստատությունից հետո:

Շուրջ 10 տարի անց՝ 2023-ին, քարտեզի վրա «Լոֆթ»-ի հասցեն միայն մեկը չէ. կենտրոնների ցանցն ընդլայնվել է ինչպես տարածական, այնպես էլ ձեւաչափային նշանակությամբ՝ «Լոֆթ Երեւան», «Լոֆթ Գյումրի», «Լոֆթ Վանաձոր», «Լոֆթ Իջեւան» եւ «Լոֆթ Մեղրի» (վերջին երեքը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ): Այս տարիների ընթացքում մեզ հաջողվել է հիմնել ստեղծագործ ու եռանդուն երիտասարդների համայնք, որն օրեցօր համալրվում է ինտելեկտուալ, վառ դեմքերով: «Լոֆթ»-ում մենք ստեղծագործում ենք, բացահայտում ինքներս մեզ, հանդիպում մեր մենթորներին եւ միավորվում գաղափարի շուրջ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Գ. Շերամի փողոց, 35 շենք, 22 հասցեում գտնվող 138,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 50500000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Աբովյան փողոց, 46 շենք, 7 հասցեում գտնվող 120,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 115800000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Ռաֆֆու փողոց, 39 շենք, 50 հասցեում գտնվող 44,6 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 24300000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Առինջ, 17-րդ փողոց, 53 հասցեում գտնվող 639,45 ք.մ. բնակելի տուն, 83 ք.մ. խաղասենյակ, 18,4 ք.մ. ջրավազան, 27 ք.մ. /43,2 խմ/ պարիսպ եւ 0,1339 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 250000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Ջանիբեկյան փողոց, 24 հասցեում գտնվող 511,25 ք.մ. բնակելի տուն, 13,5 ք.մ. օժանդակ շինություն, 10,08 ք.մ. /30,24 խմ/ պարիսպ, 69,56 քմ ինքնակամ կառուցված շինություններ եւ 0,054747 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 170000000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Ջրվեժ, գյուղ Ջորաղբյուր, Բարեկամության փողոց, թիվ 21 հասցեում գտնվող 432,15 ք.մ. բնակելի տուն, 28,4 ք.մ. ավտոտնակ, 12,64 ք.մ. սանհանգույց, լոգարան, 33,8 քմ ջրավազան, 166 քմ ծածկ, 17,12 քմ /34,24 խմ/ պարիսպ եւ 0,128 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 207000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 14.12.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 01.07.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԱՐՑԱԽ

ՑԱՎԸ ՍՓՈՓՈՒՄ ԵՆ ԹՈՌՆԵՐԸ

«Մինչեւ 1988 թվականը ապրել եմ Շուշի քաղաքում: 1988 թվականին, երբ սկսվեց պատերազմը, ընտանիքիս հետ տեղափոխվեցինք Ստեփանակերտ: 4 զավակ եմ ունեցել, մեծ չարչարանքով մեծացրել, բոլորին բարձրագույն կրթության տվել:

Ամուսինս 1992 թվականին Մարտակերտի «Կանալ» կոչվող տեղամասում վիրավորում է ստացել, որից հետո վիրավորումը ծանր հետք թողեց նրա առողջության վրա: Հաճախակի էր ունենում էպիլեպսիկ նոպաներ: Մեկ տարի Ստեփանակերտում բուժում ստանալուց հետո վիճակն ավելի վատացավ: Դիմեցինք այդ ժամանակ ՊԲ նախարար Սամվել Բաբայանին: Աջակցեց, ու նրա միջնորդությամբ ուղարկեցինք Մոսկվա՝ բուժվելու... Գնաց, բայց էլ չվերադարձավ»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատմում է Արցախից բռնի տեղահանված, որդեկորույս Գյուլվարդ Աթայանը:

Դժվարություններն անտեսելով՝ տիկին Գյուլվարդը չընկճվեց եւ կարողացավ երեխաներին ուսման տալ ու ամուսնացնել: 2020թ. 44-օրյա պատերազմը կրկին ցավ պատճառեց նրան՝ տանելով իր փրկարար որդուն:

«Նոյեմբերի 6-ի առավոտյան որդիս զանգեց կնոջն ու ասաց, որ երեխաների քեֆին երբեք չկպնի ու ոչ մի անգամ նրանց ցանկությունն անկատար չթողնի: Հարսս հեռախոսը փոխանցեց ինձ, ինձ հետ եւս խոսեց: Նեղվեցի, զգացի, որ մի բան այն չէ, բայց ինձ չկորցրի, հավաքեցի ինձ ու ջղայնացած ասացի՝ կգաս ու ինքդ երեխաներիդ կնայես: Սա էլ եղավ իմ ու որդուս վերջին խոսակցությունը»,-ասում է մեր զրուցակիցը: Որդուն հուղարկավորեցին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում, իսկ 2021 թվականի հունվարին վերադարձան Ստեփանակերտ՝ հայրենի հողում ապրելու ու արարելու:

«Հարսս որոշեց, որ պիտի կրի ամուսնու համազգեստը, աշխատանքի անցավ Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության արտաքին իրավիճակների պետական ծառայությունում: Պետությունը, որպես զոհվածի ընտանիք, 3 սենյականոց բնակարան հատկացրեց: Հարսիս ու որդուս երեք անչափահաս երեխաների հետ այնտեղ էի ապրում. ինչով կարողանում, օգնում էին: Ցավս միայն սփոփում էին որդուս երեխաները»,- ասում է տիկին Գյուլվարդը: Հիմա տիկին Գյուլվարդն ապրում է Աբովյան քաղաքում հաշմանդամության խնդիր ունեցող մոր, հարսի ու թոռների հետ: Նպաստ, թոշակ չեն ստանում, իսկ պետության հատկացրած գումարը հերիքում է միայն տան վարձին ու ամենօրյա կենցաղային ծախսերին:

«Թվում էր՝ կյանքը գոնե որդուս երեխաներին հանգիստ ու անհոգ ապրելու հնարավորություն կտա, սակայն պատերազմը տակնուվրա արեց ամեն ինչ: Հիմա արդեն որերորդ անգամ ամեն ինչ պիտի սկսենք զրոյից, եւ ամենացավալին այն է, որ ո՛չ որդիս կա, ո՛չ հայրենիքս»,- ասում է տիկին Գյուլվարդը:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» Գ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀՈՒՇԱԳԻՐ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի եւ Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի միջեւ ստորագրվեց համագործակցության պայմանագիր, եւ «Յունիբանկ»-ը դարձավ Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի գլխավոր հովանավորը: Համագործակցության պայմանագիրը ստորագրեցին «Յունիբանկ»-ի վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը եւ Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ Ռոբերտ Խաչատրյանը:

«Ըմբշամարտը Հայաստանում ամենասիրված մարզաձեւերից է: Մեր ըմբիշները միշտ մրցանակային բարձր տեղեր են նվաճում եւ արժանանում մեդալների: Մենք բարձր ենք գնահատում Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի ձեռքբերումները եւ ուրախ ենք աջակցել մեր մարզիկներին, որոնք, վստահ եմ, նոր մրցաշրջանում կրկին փայլուն հաղթանակներով կուրախացնեն երկրպագուներին»,- ասաց Մեսրոպ Հակոբյանը:

«Յունիբանկ»-ն իր ողջ գործունեության ընթացքում ակտիվորեն աջակցում է մարզիկներին եւ սպորտային տարբեր միջոցառումների անցկացմանը: Բանկի ֆինանսական աջակցությամբ այս տարի բացվեց Unisport մարզական ակումբը, որը նպաստելու է տարբեր մարզաձեւերի, այդ թվում՝ ըմբշամարտի առաջխաղացմանը: Unisport ակումբին միացել են հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի չեմպիոն եւ Եվրոպայի կրկնակի չեմպիոն Մալխաս Ամոյանը, հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր եւ Եվրոպայի առաջնության կրկնակի մրցանակակիր Սլավիկ Գալստյանը, ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի եռակի չեմպիոն, աշխարհի եռակի բրոնզե մեդալակիր եւ մինչեւ 23 տարեկանների աշխարհի առաջնության կրկնակի չեմպիոն Արսեն Հարությունյանը, ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի չեմպիոն, աշխարհի անհատական Գավաթի խաղարկության ոսկե մեդալակիր, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր, աշխարհի մինչեւ 23 տարեկանների առաջնության չեմպիոն Վազգեն Թեւանյանը: Ակումբի կազմում ընդգրկված են նաեւ Unisport ֆուտզալի թիմը, հրաձգության աշխարհի գավաթի ոսկե մեդալակիր, Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր, Եվրոպական խաղերի արծաթե մեդալակիր ու ռեկորդակիր Էլմիրա Կարապետյանը եւ այլ անվանի մարզիկներ:

«Շնորհակալ եմ «Յունիբանկ»-ին նման համագործակցության համար: Հուսամ՝ միասին երկար ճանապարհ ենք անցնելու: Բանկը ողջունելի քայլեր է ձեռնարկել՝ հանուն հայ մարզիկների եւ սպորտի զարգացման: Հայկական սպորտի զարգացմանն ուղղված աշխատանքի պտուղները վայելելը երկար սպասեցնել չի տա»,- նշեց Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ Ռոբերտ Խաչատրյանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Կորել է Երեւանի ԳԳՄ Մալաթիա-Սեբաստիա ծառայության աշխատող՝ հսկիչ Սոնա Արտաշեսի Արշակյանի վկայականը՝ տրված «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ (1)

2023թ. դեկտեմբերի 19-ին, ժամը 12:30-ին պարտապան Ա/Ձ Վարդան Ավետիսյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց պող. 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի սեփականության իրավունքով Վարդան Ավետիսյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով, բաց դասական եղանակով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-1. ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիսում գտնվող ավտոտնակը:

Մեկնարկային գինը սահմանվում է 499,670 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

-Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.

- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Վարդան Ավետիսյանի սնանկության հաշվին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղ 2472303816560000 հաշվեհամարին՝ մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ (2)

2023թ. դեկտեմբերի 19-ին, ժամը 12:00-ին Սեւակ Գալստյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի «Արդշինբանկ» ՓԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով երրորդ անձ Հարութ Գեւորգյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝

1 ԼՈՏ-ով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-1. ՀՀ ք. Արագածոտնի մարզ, գ. Ձորագլխում գտնվող 381.0 քմ մակերեսով արտադրական նշանակության հողամասը:

Մեկնարկային գինը սահմանվում է 318,208 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով (բայց ոչ ավել 200,000 ՀՀ դրամից) մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Սեւակ Գալստյանի սնանկության հաշվին՝ «Ամիո Բանկ» ՓԲԸ-ի «Նոր Արեշ» մասնաճյուղ 1150004558048023 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան /ք.Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

● *Նոյեմբերի 29-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Հարսնացու հյուսիսից» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ինչպիսի պարտականություններ ունեն ծառայողական քննության կողմերը:

Վազգեն Սաֆարյան (38 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ծառայողական քննության կողմը պարտավոր է՝

ա) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայանալ քննության կատարման վայր եւ տալ բացատրություններ (լրացուցիչ բացատրություններ), մասնակցել այլ անհրաժեշտ գործողությունների եւ ստորագրությամբ հաստատել դրանց կապակցությամբ կազմված արձանագրությունների (տեղեկանքների) ճշտությունը, իսկ չստորագրելու դեպքում՝ ներկայացնել գրավոր պատճառաբանություն,

բ) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայացնել քննության համար անհրաժեշտ իր մոտ եղած առարկաները եւ փաստաթղթերը,

գ) ենթարկվել ծառայողական քննություն վարողի՝ ծառայողական քննություն անցկացնելու կարգով սահմանված պահանջներին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծառայողական քննության ընթացքում ծառայողական քննության կողմերն ունեն նաեւ իրավական ակտերով, ինչպես նաեւ ծառայողական քննություն անցկացնելու կարգով իրենց վերապահված այլ պարտականություններ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա ինչպե՞ս է վճարվում նրա կենսաթոշակը:

Գրետա Հարությունյան (71 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա պետք է գրավոր դիմի բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը նախկին բնակության վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումից գրավոր պահանջում է կենսաթոշակի գործը եւ այն ստանալուց հետո շարունակում վճարել կենսաթոշակը:

Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի նախկին բնակության վայրում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու օրվանից:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ եթե կենսաթոշակը վճարելը դադարեցվել է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել: Ի դեպ, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

«Ժողովուրդ» օրաթերթի թղթակիցն արձանագրել է, թե ինչ վիճակում է գտնվում Արաբկիր վարչական շրջանի դատարանի տանիքին ծածանվող եռագույնը:

Ո՞վ պետք է պատասխան տա Արաբկիր վարչական շրջանի դատարանի դիմաց պատառոտված եռագույնի համար. մի՞թե այսքան ժամանակ դատարանում աշխատող որեւէ աշխատակից եւ, առհասարակ, արդարադատություն իրականացնող դատավորները չեն նկատել, թե ինչ վիճակում է գտնվում եռագույնը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ
1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 4 - 9 - 2 + 3
	Կոտայքի լեռներ	- 3 - 7 - 2 + 2
	Կոտայքի նախալեռներ	0 + 2 + 4 + 8
	Գեղարքունիք	- 4 - 9 0 - 5
	Լոռի	- 2 - 6 - 1 + 4
	Տավուշ	- 1 + 3 + 5 + 9
	Արագածոտնի լեռներ	- 2 - 6 0 + 3
	Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 3 + 6 + 10

	Արարատ	+ 2 + 5 + 7 + 10
	Արմավիր	0 + 3 + 6 + 9
	Վայոց ձորի լեռներ	- 3 - 7 - 3 + 1
	Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 8 + 5 + 9
	Սյունիքի հովիտներ	+ 1 + 5 + 10 + 13
	Սյունիքի նախալեռներ	0 - 4 + 10 + 14
	ԼՂՀ	+ 1 + 6 + 9 + 12
	Երեւան	+ 6 + 8 + 11 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*